ՊՎԱ համակարգի բարեփոխման մոդելի առաջարկ

Գործող համակարգի ամփոփ ներկայացում

ՀՀ–ում գործում է պայմանական վաղաժամկետ ազատման (ՊՎԱ) եռաստիճան համակարգ՝ Վարչական հանձնաժողով, Անկախ հանձնաժողով և դատարան: Օրենքով սահմանված նվազագույն պատժի ժամկետը լրանալու դեպքում, քրեակատարողական հիմնարկի (ՔԿՀ) վարչական հանձնաժողովը մեկամսյա ժամկետում նիստ է գումարում՝ քննարկելու դատապարտյալի վաղաժամկետ ազատման վերաբերյալ Անկախ հանձնաժողովին (ԱՀ) միջնորդագիր ներկայացնելու հարցը: Եթե հանձնաժողովը որոշում է միջնորդագիր չներկայացնել, ապա դատապարտյալի ՊՎԱ հարցի քննարկումը հետաձգվում է օրենքով նախատեսված ժամկետով: Այս որոշումը ենթակա է բողոքարկման: Հավանություն տալու դեպքում, միջնորդագիրը քննարկվում է ԱՀ-ի կողմից: Ստեղծվում է ԱՀ երկու անդամից բաղկացած ենթահանձնաժողով, որի անդամներն այցելում են ՔԿՀ, հանդիպում տվյալ դատապարտյալի հետ, ուսումնասիրում նրա գործը, որից հետո կարծիք են ներկայացնում ԱՀ–ին: Ներկայացված կարծիքի հիման վրա ԱՀ–ն փակ քվեարկությամբ որոշում է կայացնում միջնորդագրին հավանություն տալու կամ չտալու մասին: ԱՀ որոշումները պատճառաբանված չեն և հիմնված չեն հստակ սահմանված չափանիշների վրա: Հավանություն չտալու որոշումը բողոքարկման ենթակա չէ, այն կարող է բողոքարկվել միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել ընթացակարգի խախտումներ: Հավանություն տալու դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմը ՊՎԱ գործն ուղարկում է դատարան: Պայմանական վաղաժամկետ ազատման վերջանական որոշումը կայացնում է դատարանը, և այդ որոշումը ենթակա է բողոքարկման:

Գործող ՊՎԱ համակարգը բազմիցս լուրջ քննադատությունների է արժանացել: Ընդ որում, ՊՎԱ ներկայացված դատապարտյալներին վերաբերող միջնորդագրերը ՔԿՀ-ում գործող Վարչական հանձնաժողովների կողմից մեծ մասամբ անգամ չեն ներկայացվում Անկախ հանձնաժողովի քննարկմանը: Այդպես, 2013թ.-ին Վարչական հանձնաժողովներն Անկախ հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից քննված գործերի ընդամենը 18 տոկոսը: Անկախ հանձնաժողովն էլ, իր հերթին, հավանության է արժանացրել ներկայացված միջնորդագրերի մոտ 30 տոկոսը, որոնց մի մասը մերժվել է դատարանի կողմից: Արդյունքում, համակարգում առկա խնդիրները հանգեցրել են մի իրավիճակի, երբ 2013թ.-ին պայմանական վաղաժամկետ ազատվել է ներկայացված դատապարտյալների ընդամենը 5 տոկոսը:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ առաջարկում է ՊՎԱ մեխանիզմը վերանայել և կիրառել հետևյալ մոտեցումը.

ա. Պրոբացիայի ծառայության (ՊԾ) ստեղծումից հետո

ՊՎԱ վերաբերյալ վերջնական որոշում կայացնող մարմինը պետք է լինի դատարանը: Դատարանը որոշում կայացնելիս ուսումնասիրում է քրեակատարողական հիմնարկի և պրոբացիայի ծառայողի տրամադրած տեղեկությունների և գնահատականների հիման վրա կազմված, երկու մասից բաղկացած եզրակացությունը, որն ունի խորհրդատվական բնույթ: Այդ եզրակացությունների մեջ պետք է գնահատված լինեն ՊՎԱ ներկայացված դատապարտյալի կրկնահացագործության ռիսկը, պրոբացիայում գտնվելու ժամանակահատվածի համար առաջարկվող պայմաններն, ինչպես նաև՝ պետք է ներկայացվեն ազատվելուց հետո դատապարտյալին անհրաժեշտ վերականգնողական և աջակցության միջոցները: ՔԿՀ վարչակազմը (համապատասխան մասնագետը) գնահատում է դատապարտյալի անցյալին և ներկային վերաբերող, իսկ պրոբացիայի ծառայողը՝ ապագային վերաբերող տվյալները:

Կրկնահանցագործության ռիսկը գնահատելիս պետք է վերլուծվեն և պատմողական զեկույցի տեսքով ներկայացվեն հետևյալ գործոնները և դրանց հարաբերակցությունը. տվյալներ դատապարտյալի մասին, քրեական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ, կրթության մակարդակը, մասնագիտության առկայությունը, զբաղվածությունը, ընտանեկան (ամուսնական) կարգավիճակը, ֆինանսական դրությունը, պատիժը կրելու ընթացքում ազատ ժամանցը, շրջապատը/միջավայրը, հուզա-հոգեկան և ֆիզիկական առողջությունը, վարքը ՔԿՀ-ում, վերաբերմունքը/դիրքորոշումն օրենքի խախտումներին և քրեական արդարադատության համակարգին, հանցավոր ենթամշակույթին, կատարված արարքին, տուժողին, կացարանի առկայությունը և դրա հետ կապված հնարավոր դժվարությունները, ազատվելուց հետո ֆինանսական դրությունը, զբաղվածության հնարավոր տարբերակները (աշխատանք, ուսում), ընտանիքի հետ հարաբերությունները, տուժողի հետ հարաբերությունները, շրջապատը ՔԿՀ-ից դուրս և այլն: Գործոնների ցանկն ավելի մանրամասն ներկայացված է կից:

ՊԾ-ի կողմից եզրակացությունը կազմվում է դատապարտյալի հետ հանդիպելուց և գործն ուսումնասիրելուց հետո: Անհրաժեշտության դեպքում, ՊԾ-ն պետք այցելի դատապարտյալի ապագա կացարան, զրուցի ընտանիքի անդամների հետ: Եթե հնարավոր է լուծել զբաղվածության հարցը, ապա պետք է հանդիպի նաև հնարավոր գործատուի հետ:

Նշված եզրակացությունը տրամադրվում է դատապարտյալին՝ ծանոթանալու և, առարկություններ ունենալու դեպքում, իր տեսակետը ներկայացնելու համար: Բացասական եզրակացության դեպքում դատապարտյալն իրավունք ունի դիմել ՔԿՀ պետին՝ միջնորդելով իր ՊՎԱ վերաբերյալ միջնորդագիրը չներկայացնել դատարան: Եթե սահմանված ժամկետում դատապարտյալը նման խնդրանքով չի դիմում, ապա ՔԿՀ պետը միջնորդագիրը կից փաստաթղթերով, ներառյալ՝ եզրակացությունը, ներկայացնում է դատարան: Դատապարտյալին ընտրության իրավունք տալու նպատակն այն է, որ, ստանալով եզրակացությունը, նա ինքը որոշի, արդյոք ցանկանո՞ւմ է դիմել դատարանի կողմից մերժվելու և 6 ամսվա ընթացքում ՊՎԱ չներկայացվելու ռիսկին, թե՞ գնահատելով ՊՎԱ հավանականությունը՝ նախընտրում է աշխատել եզրակացության մեջ նշված թերությունները կամ խնդիրները շտկելու ուղղությամբ և 3 ամիս հետո վերագնահատվել և դիմել դատարան: Եթե միջնորդագիրն ուղարկվում է դատարան, ապա եզրակացության պատճենն ուղարկվում է նաև դատախազություն:

Դատապարտյալի հարցը դատարանի կողմից քննելիս նիստին պետք է ներկա գտնվեն դատապարտյալը և, առկայության դեպքում, նրա պաշտպանը, ՔԿՀ ներկայացուցիչը, պրոբացիայի ծառայողը և դատախազը: Դատարանին իրենց դիրքորոշումն են ներկայացնում եզրակացության հեղինակները, ինչից հետո դատապարտյալին իրավունք է տրվումներկայացնելու իր առարկությունները կամ տեսակետը: Այնուհետև դատախազն է ներկայացնում իր դիրքորոշումը՝ պատժի օրինականությունը վերահսկելու իր գործառույթի համաձայն: Պրոբացիայի ծառայողը նաև ներկայացնում է ռիսկի և կարիքների գնահատման հիման վրա մշակված ՊՎԱ պայմանները և անհրաժեշտ վերականգնողական ծրագիրը:

ՊՎԱ վերաբերյալ որոշում կայացնելիս, դատարանը քննում է հետևյալ հարցերը. ստուգում է գնահատման և դրա հիման վրա կազմված եզրակացության ճշգրտությունը /պատճառաբանվածությունը: ՊՎԱ հարցը քննարկելիս դատարանը նաև որոշում է կայացնում ՊԾ կողմից առաջարկված պայմանների նշանակման անհրաժեշտության վերաբերյալ: Դատարանը կարող է հաստատել կամ մերժել դրանք, կամ առաջարկել այլ պայմաններ: Դատարանը քննում է նաև դատապարտյալի կողմից այդ պայմանների կատարման հնարավորության և պատրաստակամության հարցերը:

Եթե ՊՎ ազատված դատապարտյալը պայմանները չի կատարում կամ պատշաճ չի կատարում, ՊԾ-ն կարող է միջնորդել դատարանին՝ վերանայելու պայմանները կամ ՊՎԱ–ը չեղյալ համարելու: Պայմանների կատարման վերահսկողությունն ապահովում է ՊԾ-ն՝ համագործակցելով ոստիկանության հետ: ՊԾ-ն տեղեկացնում է ոստիկանությանը պայմանների մասին:

բ. Մինչև ՊԾ գործարկումը

Անցումային շրջանում ՊԾ գործառույթները կարող են իրականացնել ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցները՝ համապատասխան վերապատրաստում անցնելուց հետո: